



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

16 ՀՈՒԼԻՍԻ 2024 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 8 անդամներ:

Բացակա էր՝ Դավիթ Վանյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Սուսաննա Ալեքսանովա, Ռադիկ Բենյամինով, Տոնա Իվանովա, Արտաշես Լալայան, Վալոդյա Խոջայան, Սուրեն Միխայլով, Արտյոմ Յակոբով, Զաիր Նադոյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Ֆելիքս Միրզոևը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Նելլի Հարությունյանը

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ N 08 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՖԵԼԻՔՍ ՄԻՐԶՈՅԵՎ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի և 16-րդ հոդվածի պահանջները՝

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել՝ համայնքի ավագանու 2024 թվականի հուլիսի 16-ի N 08 հերթական նիստի օրակարգը՝
 - 1) ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին:
 - 2) ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքի ավագանու 2024 թվականի հունվարի 17-ի N 02-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
 - 3) Արզնի համայնքի հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին:
 - 4) Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ընդլայնման նպատակով՝ ուղղակի վաճառքի եղանակով օտարելու մասին :
 - 5) ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքի կարիքների համար աղքատար մեքենա ձեռք բերելուն համաձայնություն տալու մասին :

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման մասին ստորագրման օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 57/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՖԵԼԻՔՍ ՄԻՐԶՈՆԵՎ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 27.1-րդ հոդվածի՝

Համայնքի ավագանին որոշում է.

- 1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզնի համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 58/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԿԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի N 02-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՖԵԼԻՔՍ ՄԻՐԶՈՆԵՎ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի՝

Համայնքի ավագանին որոշում է.

- 1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզնի համայնքի ավագանու 2024 թվականի հունվարի 17-ի «Արզնի համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 02-Ն որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 59/

Լսեցին

ԱՐՋՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿԵՆՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ՖԵԼԻՔՍ ՄԻՐՁՈՒԵՎ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43 հոդվածի 2-րդ մասի 1-ի կետի դրույթների՝

Համայնքի ավագանին որոշում է՝

1.Համաձայնություն տալ՝ 2024 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված համայնքի հողային հաշվեկշռին / կցվում է ձև N22 /:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 60/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՄԱՆ ԵՊԱՏՍԿՈՎ՝ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ՖԵԼԻՔՍ ՄԻՐՁՈՒԵՎ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ , Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման պահանջներին և հիմք ընդունելով Առաքել Վլադիմիրի Առաքելյանի դիմումը՝

Համայնքի ավագանին որոշում է .

1.Հավանություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը և թույլատրել ուղղակի վաճառքի եղանակով՝ ընդլայնման նպատակով, օտարելու ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքի վարչական տարածքում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 07-016-0302-0029 կադաստրային ծածկագրով, 0.00744 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողն ընդլայնվող հողամասի սեփականատեր Առաքել Վլադիմիրի Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքի վարչական

տարածքում գտնվող 07-016-0302-0023 կադաստրային ծածկագրով , 0.1 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողին:

2.Պարտավորեցնել Առաքել Վլադիմիրի Առաքելյանին 200000 / երկու հարյուր հազար / ՀՀ դրամ վճարել Արզնի համայնքապետարանի 900105232178 հաշվեհամարին:

3.Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը 30-օրյա ժամկետում ենթակա է նոտարական վավերացման և պետական գրանցման :

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 61/

Լսեցին

**ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՂԲԱՏԱՐ ՄԵՔԵՆԱ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒՆ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ՖԵԼԻՔՍ ՄԻՐԶՈՆԵՎ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի , «Գնումների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի պահանջներին.

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Համաձայնություն տալ համայնքի կարիքների համար «ՄԻԿԱՐ ՄՈԹՈՐՄ » ՓԲԸ-ից 36000000 / երեսունվեց միլիոն / ՀՀ դրամով ԿԱՄԱԶ-43253-G5 մակնիշի կողային բարձմամբ KO-440-7 ամրաշրջանակ աղբատար մեքենա ձեռք բերելու համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 62/

Ավագանու անդամներ

ՍՈՒՍԱՆՆԱ ԱԼԵՔՍԱՆՈՎԱ

ՌԱԴԻԿ ԲԵՆՅԱՄԻՆՈՎ

ՏՈՄԱ ԻՎԱՆՈՎԱ

ԱՐՏԱՇԵՍ ԼԱԼԱՅԱՆ

ՎԱԼՈՂԵԱ ԽՈՋԱՅԱՆ

ՍՈՒՐԵՆ ՄԻԽԱՅԼՈՎ

ԱՐՏՅՈՄ ՅԱԿՈԻԲՈՎ

ԶԱԻԼ ՆԱԴՈՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՖԵԼԻՔՍ ՄԻՐԶՈՒԵՎ



Նիսի Հարությունյանը